

ՎՐԱՍՏԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼ. «ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱԶԱԿՅՈՒՄ ԵՎ ԱԶԱԿՅԵԼՈՒ Է ՎՐԱՍՏԱՆԻՆ. ԱՅՂ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՄ ԱՅՍՏԵՂ»

Օգոստոսի 23-24-ը, երկօրյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելը: Նշենք, որ վերջին անգամ Անգելա Մերկելը Վրաստան էր ժամանել 10 տարի առաջ, 2008 թվականի ռուս-վրացական պատերազմից անմիջապես հետո: Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու միջազգային օդանավակայանում Անգելա Մերկելին եւ պատվիրակության անդամներին դիմավորեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալալիանին եւ Գերմանիայում Վրաստանի դեսպան Էլզոլա Խոկրիշվիլին:

Օդանավակայանից Անգելա Մերկելը եւ նրան ուղեկցող անձինք ուղեորվեցին Վրաստանի կառավարության գրասենյակ, որտեղ էլ տեղի ունեցավ Գերմանիայի կանցլերի դիմավորման պաշտոնական արարողությունը:



ՕՐԱՎՈՐԳՈՒՄ ՎՐԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՆ ԷՆՆ

Դիմավորման պաշտոնական արարողության ավարտից հետո, Վրաստանի կառավարության գրասենյակում կայացավ Վրաստանի վարչապետ

Մամուկա Բախտաձեի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի առանձնագրույցը, որին հաջորդեցին երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված ձեռագրավոր բանակցությունները:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-գերմանական հարաբերություններին առնչվող հարցեր, գոհունակությամբ ընդգծեցին երկկողմ համագործակցության զարգացման առաջընթացը: Երկու երկրների պատվիրակությունների հանդիպման օրակարգում էին նաեւ տարածաշրջանային եւ

միջազգային ասպարեզներում համագործակցության խրախուսման հարցերը: Կողմերը քննարկեցին նաեւ Ռուսաստանի կողմից Վրաստանի բռնազավթված երկրամասերում Աբխազիայում եւ Ցխին- (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱՆՏԱԶԵ. «ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎՐԱ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԴՐՎՈՒՄ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, երկրի կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակներում, պաշտոնանկ էր արել վեց նահանգապետի:

Պաշտոնից ազատվածների թվում էին Շիրա-Քարթլիի նահանգապետ Ակակի Մաճուտաձեն, Մցխեթա-Մթիանեթիի նահանգապետ Լեւան Զաուտաշվիլին, Սամեգրելո-Չեմո Սվանեթիի նահանգապետ Լեւան Շոնիան, Քվեմո Քարթլիի նահանգապետ Գրիգոլ Նեմսաձեն, Գուրիայի նահանգապետ Մերաբ Ծանուկվաձեն եւ Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ, ընդամենը չորս ամիս առաջ այդ պաշտոնում նշանակված Կախա Սամխարաձեն: Պաշտոնանկությունը՝ 2-րդ էջում)



ԲԵՏԻԿ ԱՄԻՐԻՍԱՆՎԻԼԻՆ՝ ՍԱՄՅՆԵ-ԶԱՎԱՍԽԵԹԻ ՆԱՅՆԱԳՎՊԵՏ



33-ամյա Բեթիկ Ամիրիսանավիլին ծնվել է Թբիլիսիում, ավարտել է Թբիլիսիի պետական լսարանի իրավաբանական ֆակուլտետը: 2007-2008 թվականներին եղել է Թբիլիսիի միջազգային օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության

տեսուչ, ապա աշխատանքային գործունեությունը շարունակել է ներքին գործերի նախարարության համակարգում զբաղեցնելով տարբեր պաշտոններ: Մասնավորապես, որպես քաղաքապետի տեսուչ, տեղամասային տեսուչ-քննիչ աշխատել է Թբիլիսիի գլխավոր վարչության Իսմի-Սամգորիի վարչությունում, Մցխեթա-Մթիանեթիի, Կախեթիի, Իմերեթիի երկրամասային վարչություններում: 2016-2017 թվականներին զբաղեցնում էր Վրաստանի ՆԳ նախարարի առաջին տեղակալի պաշտոնը: Ամուսնացած է, ունի զավակ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԳՈՂԱՅՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՆ Է՛»

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 17-ին, Երևանի Հանրապետության հրապարակում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությամբ, անցկացվեց հանրահավաք՝ մվիրված երկրի նոր կառավարության գործունեության առաջին 100 օրերի արդյունքների ամփոփմանը:

Հանրահավաքին մասնակցեց Երևանի, Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաեւ՝ Արցախից եւ արտասահմանից ժամանած շուրջ 150 հազար մարդ:

Հանրահավաքին, իր գլխավորած կառավարության 100 օրյա գործունեության հաշվետվությամբ եւ առաջիկա ծրագրերի մասին խոսեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:



ԱՆՆԱԽԱՂԵՂ ԻՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՍՏԵՆԱՐՀԱՅԻՆ ԴԱՏԱՌԹՅԱՆ ՄԵՉ

Հանրահավաքի մասնակիցներին ուղղված իր խոսքի սկզբում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց իջեցնել պաստառները, որոնք ուղղված են որեւէ մեկի դեմ (նշենք, որ հանրահավաքի մասնակիցների ձեռքում պաստառներ կային, որոնց վրա ջնջված էին Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի դեմքերը): (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԵՎՍ ԶԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՐՑՈՒՄ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ իրենց թիմում դեռ քննարկումներ են ընթանում նախագահական ընտրությունների կառավարող կուսակցության մասնակցության շուրջ:

Մասնավորապես, նա նշեց, որ բանավեճեր են տարվում նախագահական ընտրություններին «Վրացական երազանքի» մասնակցության ձեռագրավոր, իրենց թեկնածուի առաջադրման շուրջ:

«Վրացական երազանքում» արժանի թեկնածուները շատ են, ովքեր, առանց որեւէ հիմնախնդրի, ցանկացած ընտրությունում կվավերացնեն արժանի արդյունք: Մենք բազմիցս պարզաբանել ենք, թե ինչով է պայմանավորված մեր մոտեցումը: Կրկին անգամ հաստատում ենք, որ մենք հետեւում ենք իրադարձություններին, թեկնածուներին, ովքեր կզբաղեցնեն, եւ կընդունենք համապատասխան որոշում: Մեզ մոտ այդ հարցով տարվում են խորհրդատվություններ ու բանավեճեր, եւ այդ կապակցությամբ կրկին ներկայացնում են մեր դիրքորոշումը՝ «Վրացական երազանքի» փիլիսոփայությունը խորհրդարանական ժողովրդավարության եւ խորհրդարանական կառավարության շուրջ: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՈՐԱՆ ԴԵՒՎԱՆՎԻԼԻՆ՝ ՔՎԵՍՈՒ ԲԱՐԹԼԻԻ ՆԱՅՆԱԳՎՊԵՏ



52-ամյա Շոթա Ռեխավիաշվիլին ավարտել է Թբիլիսիի պետական լսարանի իրավաբանական ֆակուլտետը: Մասնագիտությամբ իրավաբան Շոթա Ռեխավիաշվիլին երկար տարիներ աշխատել է Վրաստանի իրավաբանական գերատեսչություններին համակարգում: Որպես մարզային դատախազ՝ աշխատել է Քվեմո Քարթլիի երկրամասային դատախազությունում, ապա կրկին տեղափոխվել է Գլխավոր դատախազի աշխատակազմ, գլխավորել դատավարական հետաքննչական դեպարտամենտը: Որպես դատավարական հետաքննության դեպարտամենտի ղեկավար՝ աշխատել է նաեւ Վրաստանի ֆինանսների նախարարության համակարգում: 2012-2013 թվականներին Վրաստանի գլխավոր դատախազի տեղակալ էր, իսկ 2014 թվականից զբաղեցնում էր բռնազավթված տարածքներից բռնազաղթվածների, փախստականների եւ վերաբնակեցման նախարարի տեղակալի պաշտոնը: Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱՆՏԱԶԵ. «ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎՐԱ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ե ԴՐՎՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տոնաթող արվեց նաև Իմերեթիի նահանգապետի պաշտոնակատար Գրիգոր Դալաբաշվիլին, որը այդ պաշտոնում ընթացիկ տարվա մարտից փոխարինել էր Վանի եւ Խոնիի միջանկյալ մեծամասնական ընտրություններում հաղթանակած Գիվի ճիճինաձեին:

Իրենց պաշտոնները պահպանեցին Կախեթիի նահանգապետ՝ Իրակլի Քաղազիշվիլին եւ Ռաճա-Լեչխումի-Քվեմո Սվանեթիի նահանգապետ՝ Արչիլ Ջափարիձեն:

Օգոստոսի 20-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն ներկայացրեց երկրի ինը տարածաշրջաններից յոթի նոր նահանգապետներին:

Վրաստանի կառավարության ղեկավարի որոշմամբ, Մցխեթա-Մթիանեթիի տարածաշրջանի նահանգապետի պաշ-

տոնում նշանակվեց Շալվա Կերեսելիձեն: Մինչ այդ, նա բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունում գլխավորում էր տարածաշրջանների միջեւ հարաբերությունների դեպարտամենտը:

Շիրա Քարթլիի տարածաշրջանի նոր ղեկավար Գիորգի Խոջեանիշվիլին աշխատում էր ՆԳ նախարարության համակարգում, տարիներ շարունակ աշխատել է գերատեսչության գլխավոր տեսչությունում: Մինչև վերջին նշանակումը, որպես մեներջեր աշխատել է «Մագֆիկում»:

Սամեգրելո-Ձեմո Սվանեթի կղզեկավարի Ալեքսանդր Սոժերելիան: Մինչև այս նշանակումը Տիսիլի վերամշակման եւ արտահանման ասոցիացիայի նախագահն էր:


Գուրիայի տարածաշրջանի նահանգապետի պաշտոնը կզբաղեցնի Ջուրաբ Նասարախան, ով 90-ական թվականներ-

ին «Վրաստանի քաղաքացիների միության» անդամ էր:

Իմերեթին կղեկավարի գնդապետ Շալվեգո Տաբատաձեն: Նա 90-ական թվականներին ծառայում էր երկրի զինված ուժերում:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանը կգլխավորի Շոթա Ռեխվիաշվիլին, իսկ Սամցխե-Ջավախեթին՝ Բեսիկ Ամիրխանաշվիլին:

Ներկայացնելով նոր նահանգապետներին, վարչապետը հայտարարեց, որ պետական լիազորների վրա մեծ պատասխանատվություն է դրվում, որպեսզի երկրի բոլոր երկրամասերի բնակիչները շոշափելիորեն զգան, որ պետությունն իրենց մասին հոգ է տանում: Նրա խոսքով, նորանշանակ նահանգապետներին ընձեռնվում է ի բարօրություն երկրի իրենց որակավորումը, արհեստավարությունն ու եռանդը դրսևորելու հնարավորություն:



ԵՎՐԱՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՂԱՏԱՏՎԵՑ ԻՐԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓԱԹԵԹԸ

Օգոստոսի 23-ին Եվրասիան ձեռնարկեց իր արտադրության 18 մլն եվրոյի չափով Իրանին օգնություն ցուցաբերելու առաջին փաթեթին: 18 միլիոնից 8 միլիոնը հատկացվելու է մասնավոր հատվածին:

Նշվում է, որ այդ միջոցներն առաջին քայլն են երկրի համար 50 մլն եվրոյի չափով օգնության ավելի ընդգրկում փաթեթի շրջանակներում:

Յիշեցնենք, որ Եվրամիությունն օգոստոսի 7-ին կիրարկել է արգելափակման եվրոպական կանոնակարգը, որն իր տարածքում անվավեր է հայտարարում ԱՄՆ-ի արտերկրյա պատժամիջոցներն Իրանի նկատմամբ, Եվրոպայի ընկերություններին արգելում է կատարել դրանք, ինչպես նաև արգելում է արտասահմանյան դատարանների բոլոր այն վճիռների կատարումը, որոնք ընդունվել են այդ պատժամիջոցների հիման վրա:

ԱՄՆ

ՆՇԵԼ Ե ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՄԱՍԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը պատրաստ կլինի քննարկել Ռուսաստանի նկատմամբ սահմանված ամերիկյան պատժամիջոցները վերացնելու հնարավորությունն այն դեպքում, եթե Մոսկվան սկսի Վաշինգտոնի հետ համատեղ քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ Սիրիայի եւ Ուկրաինայի նկատմամբ: Այս մասին Թրամփը հայտարարել է Reuters գործակալությանը տված հարցազրույցում:

Նա նշել է, որ պատժամիջոցների հարցը չի արժարժվել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ իր հանդիպման ժամանակ, սակայն նշել է դրանց հնարավոր վերացման պայմանը: «Ես դա կքննարկեմ, եթե նրանք մեր օգտին քայլ անեն: Բայց առանց այդ քայլի, ես դա քննարկել չեմ պատրաստվում», - նշել է ԱՄՆ նախագահը:

ՄԱԿ

ՎԱՍԿԱՆՎԵԼ Ե ՔՈՑԻ ԱՆԱՆԸ

Ութուն տարեկան հասակում կյանքից հեռացել է ՄԱԿ նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանը:

Քոֆի Անանը 1997 թվականի հունվարի 1-ից մինչ 2006 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցրել է ՄԱԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը: 2001 թվականին արժանացել է Խաղաղության Նոբելյան մրցանակի:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԵՎՄ ԶԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ ՆԱԽԱԳԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՉԱՐՑՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նական հանրապետության հիմնումն է: Ելնելով դրանից, այդ երկու կողմերն էլ ունեն

իրենց հիմնավորումները: Մենք խորհրդարանում ունենք սահմանադրական մեծամասնություն եւ ժողովրդավարական զարգացման համար,

զուցե գերադասելի է նախագահական ընտրություններին չմասնակցելը, թեպետ, մյուս կողմից, գտնում ենք, որ կուսակցությունն անպայ-

ման պետք է նախագահական ընտրություններին մասնակցի իր թեկնածուով,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

ԲԱՆԿԵՐ

ՅԵՏԱՔՐՔԻՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ԲԱՆԿԵՐԻ «ՍԵՎ ՑՈՒՑԱԿՈՒՄ» ՉԱՅՏՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՉԱՄԱՐ

Օգոստոսի 17-ին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, անդրադառնալով բանկ-սպառող հարաբերությունների թեմային, հայտարարեց, որ քաղաքացիների հարցով, որոնք բանկերի «սեւ ցուցակում են» եւ այդ պատճառով չեն կարող ներգրավվել տնտեսական գործունեության մեջ, ընթանում են ակտիվ աշխատանքներ, եւ արդեն աշնանը կներկայացվեն հետաքրքիր առաջարկներ:

«Այն, ինչ հայտարարեցի խորհրդարանի ամբիոնից, այն է, որ մեր քաղաքացիները, մոտ 650 հազար մարդ, չունեն երկրի տնտեսական ակտիվություններին մասնակցելու հնարավորություն: Սա կա-

րելոր տնտեսական պատճել է ինկլյուզիվ աճի հասնելու համար: Իրականացնում ենք բազմաթիվ բարեփոխումներ, սակայն, եթե այդ բարեփոխումների արդյունքը չարտացոլվի բնակչության մեծ

մասի վրա, դա պատճել է, որը պետք է հաղթահարել»,- նշել է վարչապետը:

Նշենք, որ ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից վարկային-տեղեկատվական բյուրոն անցնում է Ազգային բանկի հսկողության տակ: Փոփոխվում է վարկային պատմությունը վարելու ձևն ու չեղարկվում է «բացասական կարգավիճակը»: Ֆինանսական կազմակերպությունները՝ որպես վարկատուներ կհենվեն միայն սպառողի փաստացի տվյալների վրա:

ԿՐԲԱ ԳՎԵՆԵՏԱԶԵ. «ԱՌԱՆՅՑ ԵՎԱՍՈՒՏԸ ՉԱՏԱՏՈՂ ՓԱՏԱԹՂԹԻ ՎԱՐԿԵՐ ԳՆԵ ՏՐԿԻ»




գանքել է «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Բիծինա Իվա-

- Առանց եկամուտը հաստատող փաստաթղթի, չպետք է տրվեն վարկեր: Ազգային բանկի կողմից իրականացվող քայլերը ծառայում են այդ որոշմանը, - նման հայտարարությամբ, Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն արձագանքել է «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Բիծինա Իվա-

նիշվիլու հայտարարությանը: Նրա խոսքով, Ազգային բանկի մանդատը ֆինանսական կայունության ապահովման եւ ֆինանսական համակարգի թափանցիկության աջակցությունն է:

«Ազգային բանկը քաղաքական կազմակերպություն չէ: Մենք չենք անում քաղաքական հայտարարություններ: Ազգային բանկի պարտականությունը չէ գնահատել գործադիր իշխանության աշխատանքը: Ազգային բանկի մանդատը ֆինանսական կայունության ապահովումն է ֆինանսական համակարգի թափանցիկության աջակցությունն է»,- նշել է Գվենետաձեն:

Ազգային բանկի նախագահի խոսքով, գերպարտքի հետ կապված թեմաներով գերատեսչությունում մշտապես քննարկումներ են ընթանում:



ՄՏՐԱՍԲՈՒՐԳԻ ՂԱՏԱՐԱՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

ԲՈՂՈՔԻ ՉԱՅՏ՝ ՄՏՐԱՍԲՈՒՐԳԻ ԵՎՐՈՂԱՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի. «Չետապնդում, ձերբակալություններ, հարձակումներ եւ սպանություն վարչական պրակտիկա», Վրաստանի արդարադատության նախարարությունը բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Այս գործը վերաբերում է բռնազավթված տարածքներում եւ դիմակայության գոտում երկայնքով զանգվածային հարձակումների, ձերբակալությունների, հարձակումների եւ սպանությունների վարչական պրակտիկային, որը 2008 թվականի պատերազմից հետո ուժեղացավ եւ այս տարվա փետրվարին, Արչիլ Տատունաշվիլու խոշտանգումների եւ սպանության ժամանակ, ծայրահեղ կետի հասավ:

Վրացական կողմը պահանջում է, որ Մոսկվան պատասխանատու լինի մի քանի հողվածների համար: Վրաստանն ապացույցներ եւ փաստեր է ներկայացրել Ստ-

րասբուրգի դատարան: Չատուկ ուշադրություն է դարձվում Արչիլ Տատունաշվիլու, Գիգի Օթխոզորիայի եւ Դավիթ Բեշարուլիի սպանություններին:

Խոշտանգումների զոհերի փրկության կենտրոնը «Empathy»-ն Եվրոպական դատարան հայտ ներկայացրեց «Արչիլ Տատունաշվիլին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»։ Դատարանը որպես հիմնական ապացույց ներկայացվեց 87 էջանոց որոշումը, որ 34-ամյա Արչիլ Տատունաշվիլին խոշտանգել են եւ սպանել Ցխիճվալիում: Տատունաշվիլիի մահվան հետաքննության արդյունքները պարզվել են օգոստոսի 10-ին, Սամխարաուլի փորձագիտական բյուրոյի կողմից: Այն օգոստոսի 22-ին ուղարկվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան:

Դրանից առաջ Վրաստանն ուներ երկու միջպետական վեճ Ռուսաստանի հետ: Այսպիսով, առաջին դատա-



կան հայցի համաձայն, որը վերաբերում էր Վրաստանի քաղաքացիների արտաքսմանը Ռուսաստանում, եւ այդ գործն ավարտվեց Վրաստանի հաղթանակով: 2008 թվականի պատերազմին վերաբերող երկրորդ վեճում Վրաստանի արդարադատության նախարարությունը ներկայացրեց եզրափակիչ նիստում (2018 թվականի մայիսի 23-ին) եւ այժմ սպասում է որոշման հրապարակմանը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՈԼՈՐՏ

ՍԿՍԿԵԼ Ե ՖԵՐՄԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՑՈՒՄԸ

Վրաստանում գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությունը երկրի ողջ տարածքում սկսել է ֆերմաների եւ ֆերմերական տնտեսությունների գրանցման ծրագիրը:


Ինչպես նշված է կառավարության հարդորագրության մեջ, այսօր գյուղատնտեսության ոլորտում իրականացվող բարեփոխումները երկրի կառավարության առաջնահերթություններն են եւ գլխավոր խնդիրն է գյուղատնտեսության ոլորտը վերածել եկամտաբեր բնագավառի:

վեն այն անձինք, ովքեր ունեն առնվազն 0,25 հեկտար գյուղատնտեսական հողահանդակ եւ, ովքեր արդեն պետական ծրագրերից օգտվողներ են կամ ստանում են գյուղատնտեսության ոլորտի համար պետության կողմից սահմանված սպասարկումներ:

Բացի այդ, գրանցվել կկարողանան նաև սեփական ցանկությամբ, հավաքելով 1501 հեռախոսահամար:

Գրանցման ծրագիրը սկսվել է օգոստոսի 8-ին եւ մինչ այսօր բազայում 9500-ից ավելի ֆերմեր է գրանցվել: Ծրագրի բյուջեն 1 300 000 լարի է, եւ առաջին փուլի ավարտը պլանավորվում է 2018 թվականի վերջ:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացված գրանցման տվյալներով, 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, Վրաստանում գործում էր 574,1 հազար գյուղական տնտեսություն, վերամշակվում էր 787,7 հազար հեկտար հողատարածք:



ՇՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԴՈՒՐԲԱՆ ԲԱՅՐԱՄԻ ԱՌԻԹՎ

Օգոստոսի 21-ից երեք օրվա ընթացքում մահմեդական աշխարհը տոնում էր իր հիմնական տոներից մեկը՝ Դուրբան Բայրամը: Տոնը առավոտյան աղոթքով մեկնարկեց Վրաստանի բոլոր գործող մզկիթներում: Դուրբան Բայրամը տոնում են Ռամազանի 70-րդ օրը: Վրաստանում ապրող մահմեդականներին Դուրբան Բայրամի առիթով իրենց շնորհավորանքներն են հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, Աջարիայի ինքնավար հանրապետության ղեկավար Թոնոնիկե Ռիժվաձեն:

ՍԿՍԿԵԼ Ե «ԱՐՏԱԴՐԻՐ ԿՐԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻ ԳՐԱՑՈՒՄԸ

Արդեն սկսվել է «ԱրտադրիՐ Վրաստանում» նախագծի գրանցումը: Փոքր ձեռնարկատիրության խթանման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են բոլոր բիզնես ուղղությունները:

Բիզնես-աղափարների մրցույթին կարող է մասնակցել Վրաստանի ցանկացած քաղաքացի, ով ուզում է սկսել կամ զարգացնել փոքր բիզնեսը, ով չափահաս է, սակայն պետական ծառայող չէ, եւ պետությանը հարկային պարտք չունի:

Բիզնես-պլանի մրցույթին կշարունակեն մասնակցել այն ձեռներեցները, ում եկամուտների ծառայությունը կշնորհի ֆիզիկական անձի կարգավիճակ՝ փոքր բիզնեսի կամ ֆիքսված հարկի հարկատու: Իսկ ձեռնարկատերերի խմբից մրցույթի վերջին փուլում պահանջվում է միավորում՝ գործընկերների ձևով:

Գրանցման վերջնաժամկետն է 2018 թվականի սեպտեմբերի 2-ը:

ՊԱՇՏՈՆԱԹՎ Ե ԵՆԵԼ ՊԵՏԱՎՏԱՆՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՐԱԿԱԼԸ

Պաշտոնաթող է եղել Վրաստանի պետական անվտանգության ծառայության պետի առաջին տեղակալ Իոսեբ Գոգաշվիլին: Պետանվտանգության ծառայության մանլո ծառայությունը չի հստակեցրել Գոգաշվիլիի հրաժարականի պատճառը: Նշենք, որ Իոսեբ Գոգաշվիլին Պետական անվտանգության ծառայության պետի տեղակալ էր նշանակվել 2015 թ-ի օգոստոսին:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ



ՆՈՐ ՀԱՏՎԱԾԸ 100 ԿԻՈՄԵՏՐՈՎ ԿՐՃԱՏՈՒՄ Ե ԱՆԱԼՅԻՆԵ-ՔՈՒԹԱՅԻՄ ԱՎՏՈՃԱՆԱԴԱՐԸ

Բավական արագ ընթանում է Ախալցխեից Քութայիսի, Աբասթումանիով եւ Սաիրմեով անցնող ճանապարհապատվածի վերանորոգումը:

տեղեկությամբ, լեռնային երկու հանգստավայրերը միմյանց կապող անենակարծ ոլոռապտույտ ուղու վերանորոգումն իրականացնում է գերատեսչության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը: Վերանորոգման աշխատանքների մոնիտորինգի նպատակով, այդ ճանապարհահատված այցելեց Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Մաիա Ցքիտիշվիլին:

Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության անվտանգությունը, գրեթե 90-120 րոպեով կրճատում կենտրոնական Վրաստանից երկրի արեւմտյան հատված ուղեւորվելու ժամանակը: Մասնավորապես, գրեթե 100 կիլոմետրով կրճատվում է Ախալցխեից Ադիգենի-Աբասթումանի-Սաիրմե -Քութայիսի ճանապարհը:

Ավելացնենք, որ ճանապարհահատվածի վերանորոգման հետ միասին, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության կողմից իրականացվում են նաև մերձակա պատմական շինությունների եւ աստղադիտարանի վերանորոգման աշխատանքները, կարգավորվում են ջրամատակարարման համակարգերը:

Աբասթումանիում իրականացվող աշխատանքների դոնորը Համաշխարհային բանկն է, իսկ ճանապարհային ենթակառուցների վերանորոգման գումարն առանձնացվել է Վրաստանի պետական բյուջեից:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ



TBC-Ի ԱՎՏՈՊԱՏԱՍԻՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄՍԱԿԱՆ 5 ԼԱՐԻՈՎ

TBC-Ապահովագրությունը սպառողներին առաջարկում է ավտոպատասխանատվության ապահովագրություն՝ ամսական 5 լարիով:

Ավտոպատասխանատվության ապահովագրությունը վարորդների համար ամենակարևոր ապահովագրություններից է եւ նախատեսում է այն դեպքերը, երբ մեքենան վարելիս վարորդը վնասում է ուրիշի մեքենան, գույքը կամ վնաս հասցնում առողջությանը: Ավտոպատասխանատվության ապահովագրությունը նախատեսում է նման դեպքերում բոլոր ծախսերի փոխհատուցում:


տարբերվում են տարեկան գանձվող գումարով եւ փոխհատուցման լիմիտով:

- 1. Ամսական 5 լարի վճարելու դեպքում փոխհատուցվում է 5000 լարի:
- 2. Ամսական 10 լարի վճարելու դեպքում՝ փոխհատուցվում է 10 000 լարի:

Ավտոպատասխանատվության ապահովագրության ձեւակերպումից հետո՝ սպառողը էլեկտրոնային փոստով ապահովագրությունը կստանա, որն ուժի մեջ կլինի մեկ տարվա ընթացքում:



Ապահովագրությունը հնարավոր է ձեւակերպել <http://online.tbciinsurance.ge/> կայքէջի միջոցով:



ԲԱՑ ԴՈՆԵՐԻ ՕՐԵՐ՝ ՆԿԻՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության սպասարկումների դեպարտամենտի կազմակերպմամբ, Վրաստանի ողջ մասշտաբով փոքր գործարարության կարգավիճակ ունեցողների համար, եկամտահարկի արտոնյալ պայմանակարգի կիրարկման կապակցությամբ, անց են կացվում բաց դռների օրեր:

ր ա ռ յ ա լ : Հանդիպումներն անց են կացվում հարցուպատասխանի ու բանավե-



ճի ձեւաչափով: Հիշեցնենք, որ հարկային օրենսգրքում մասշտաբային փոփոխությունները կիրարկվեցին ընթացիկ տարվա հուլիսի 1-ից: Հարկային արտոնյալ պայմանակարգն առնչվեց ավելի քան 120 հազար վրաստանի ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Անցկացված հանդիպումների նպատակն է հարկատուներին մանրամասն տեղեկատվության փոխանցումը հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ: Վրաստանի տարբեր քաղաքներում բաց դռների օրերը, պարբերաբար, կանցկացվեն մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, «Սարփի», «Վալե», «Թբիլիսիի օդանավակայան» եւ «Քութայիսիի օդանավակայան» սահմանային անցումակետերում կանխվեցին երկրի տարածք ապօրինաբար թմրանյութ եւ հոգեբանական նյութեր պարունակող դեղորայքի ներմուծման փորձերը: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, Իրանի եւ Վրաստանի քաղաքացիների խուզարկության ժամանակ, հայտնաբերեցին թմրանյութ եւ հոգեբանական նյութեր պարունակող դեղորայք եւ «Մարիխուանա» (3,85 գրամ) թմրանյութը: Գործի նյութերը հետագա արձագանքման համար ուղարկվել են ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայությանը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ԹՄՐԱՆՅՈՒԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂՈՐԱՅՔ

Օգոստոսի 16-ից 21-ը ներառյալ, «Սարփի», «Վալե», «Թբիլիսիի օդանավակայան» եւ «Քութայիսիի օդանավակայան» սահմանային անցումակետերում կանխվեցին երկրի տարածք ապօրինաբար թմրանյութ եւ հոգեբանական նյութեր պարունակող դեղորայքի ներմուծման փորձերը: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, Իրանի եւ Վրաստանի քաղաքացիների խուզարկության ժամանակ, հայտնաբերեցին թմրանյութ եւ հոգեբանական նյութեր պարունակող դեղորայք եւ «Մարիխուանա» (3,85 գրամ) թմրանյութը: Գործի նյութերը հետագա արձագանքման համար ուղարկվել են ներքին գործերի նախարարության համապատասխան ծառայությանը:



ՎՐԱՍԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼ. «ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱԶԱԿՅՈՒՄ ԵՎ ԱԶԱԿՅԵԼՈՒ Է ՎՐԱՍԱՆԻՆ. ԱՅՊ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՄ ԱՅՍՏԵՂ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վալիի տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Բանակցությունների արդյունքներով ստորագրվեց երկու պայմանագիր, ըստ որի իրականացվելու են ստորագետնյա զբաղի պահեստարանների և ջրամբարի շինարարության, ընդհանուր առմամբ, 193 միլիոն եվրո արժույթի նախագծերը:

ՍԱՍՈՒԿԱ ԲԱՆԱՏԱԶԵ. «ՄԵՆ ԶԱՄԱՐ ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԱԿՅՈՒՄԻՆ ԱՆԳՆԱՏՆԵԼ Է»



Ասուլիսում Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, մասնավորապես, ընդգծեց. «Տիկին դաշնային կանցլեր, խորապես շնորհակալ եմ Վրաստան այցելելու համար, մեզ համար մեծ պատիվ է, որ հյուրընկալում ենք ձեզ Վրաստանում, որպես ընկերոջ, գործընկերոջ, աջակցողի և մեր երկրի մեծ երկրպագուի»:

Համոզված եմ, ձեր պաշտոնական այցը մեր հարթակի կբարձրացնի վրաց-գերմանական հարաբերությունները, այն հարաբերությունները, որոնց երկդարյա պատմությունը միասնարար տոնում ենք ընթացիկ, 2018 թվականին Վրաստան-Գերմանիա տարվա շրջանակներում»:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԳԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՍՆԵՋՆԵՐԸ ԴՊՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի վարչապետի և Գերմանիայի կանցլերի համատեղ մամլո ասուլիսում, առանձնակի ուշադրություն հատկացվեց օգոստոսյան պատերազմի 10-րդ տարելիցի և Ռուսաստանի կողմից Վրաստանի տարածքների բռնազավթման թեմային:

Ինչպես նշեց Վրաստանի վարչապետը, այսօր, երբ Ռուսաստանը բռնազավթել է Վրաստանի տարածքների 20 տոկոսը, հատկապես կարելի է Վրաստանի հուսալի դաշնակցի՝ Գերմանիայի աջակցությունը: «Մենք տիկին կանցլերի հետ քննարկեցինք իրավիճակը և հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարները: Ռուսաստանը չի կատարում 2008 թվականի օգոստոսի 12-ի հրադարարի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Այսօր Աբխազիան և Ցխինվալիի տարածաշրջանը, ցավոք, բռնազավթված են, ինչը էլ ավելի է վատթարացնում տեղի անվտանգության, հումանիտար և մարդու իրավունքների հետ կապված վիճակը»,-ասաց Մամուկա Բախտաձեն: Նա, դիմելով Գերմանիայի կանցլերին, հայտարարեց, որ, ի պատասխան այդ մարտահրավերի, Վրաստանը իրականացնում է խաղաղապահական քաղաքականություն, կառուցում է եվրոպական ժողովրդավարություն: Նրա խոսքով, երկրի կառուցողական քաղաքականությունը արդյունքի կհանգեցնի միայն գործընկեր-երկրների շնորհիվ: Այդ տեսանկյունից Գերմանիան մշակակալի դեր է կատարում և համոզված եմ, որ դա առաջիկայում էլ կշարունակվի»,- շեշտեց Մամուկա Բախտաձեն:

«ՎՐԱՍԱՆԻՄ 2008-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՄԱՆ ԱՆՍՐԱՎՐ ԷՐ»

Իր հերթին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, անդրադառնալով ռուս-վրացական օգոստոսյան պատերազմին և Վրաստանի բռնազավթված տարածքների թեմային, նշեց, որ 2008-ի օգոստոսյան պատերազմից տասը տարի անց էլ Գերմանիան չարունակում է ընդունել Վրաստանի տարածքային ամբողջականությունը և պահանջում է Ռուսաստանից դուրս բերել զորքերը երկրի տարածքից: «Տասը տարի առաջ ես հաստատականորեն պահանջեցի դուրս բերել ռուսական զորքերը և տասը տարի անց եւս կրկին պաշտպանում եմ Վրաստանի տարածքային ամբողջականությունը»,- հայտարարեց Անգելա Մերկելը և հավելեց «Ես անարդարություն եմ համարում այն, ինչ արեց Ռուսաստանը Վրաստանում 2008թ. օգոստոսին, և Պուտինը գիտի այդ հարցում իմ դիրքորոշումը, այդ թվում նաև Ուկրաինայի հարցում: Ես խոսում եմ այդ մասին: Վաղը ես հնարավորություն կունենամ շփման գծում լինել: Չնայած մեծ ջանքերի,

քիչ բան է արվել՝ այդ անարդարությունն անցյալում թողնելու համար: Մենք չպետք է համակերպվենք այս իրավիճակի հետ: Մենք պետք է ամեն օր ու առավել շատ խոսենք այդ մասին»,- Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ ասել է կանցլերը:

«ՎՐԱՍԱՆԸ ՄԵՐ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵՆԿԵՐՆ Է»

Անգելա Մերկելը, անդրադառնալով վրաց-գերմանական հարաբերություններին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հետ անցկացրած մամլո ասուլիսի ընթացքում հայտարարել է. «Գերմանիան, իհարկե, աջակցում է Վրաստանին և աջակցելու է Այդ նպատակով եմ այստեղ»:

«Կարելի է ասել, որ Վրաստանը մեր կարևորագույն գործընկերն է Արևելյան գործընկերության ենթատեքստում Ասոցիացման համաձայնագիր, Ազատ առևտրի համաձայնագիր, երկկողմ հարաբերությունների ամրապնդում և ընդլայնում: Մենք դեռևս աշխատում ենք առկա լծակների ընդլայնման ուղղությամբ և իմ այցը կնպաստի, օրինակ, տնտեսական հարաբերությունների խորացմանը»,- հայտարարեց Անգելա Մերկելը:

Գերմանիայի կանցլերի գնահատմամբ, նշանակալի քայլ էր անայցեգրային պայմանակարգի հաստատումը: «Կարծում եմ, վիզաների ազատակնացումը կարևոր քայլ էր երկու կողմերի համար: Դա ձեռքբերում էր»:

ԳԻՈՐԳԻ ՍԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՆՆՅԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՈՒՆԵՐ ԼԱՎ ԲԱՐԵՎԱՄ»

Վրաստանի գրասենյակում համատեղ մամլո ասուլիսի ավարտից հետո, պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, պատվիրակության անդամների հետ, Հավլաբարի նախագահական նստավայրում հանդիպել է Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլի հետ:



Ուղշունելով հյուրին Վրաստանի նախագահը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի կողմից Վրաստանին ցուցաբերվող աջակցության համար. «Մեր անկախության առաջին իսկ օրերից գերմանացիները ստանձնեցին մեր երկրի զարգացման աջակցության լիզերությունը: Երբ մենք խորհում ենք մեր ապագայի և ամենահարատապային հարցերի շուրջ, հիշում ենք, որ Գերմանիան մույնպես տարանջատված էր, իսկ հետո դարձավ միասնական ու հզոր ազգ, եվրոպական գործընթացների լիզեր: Նման ապագայի հույսն ունենք նաև Վրաստանի համար և համոզված եմ, որ այդ ճանապարհին համծիսն Գերմանիայի ունենք լավ բարեկամ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

«ԵՍ ԿԱՏԱՐԵՑԻ ԻՄ ԽՈՍՏՈՒՄԸ»

Նախագահի հետ հանդիպմանը իր խոսքում Գերմանիայի կանցլերը նշեց, որ ինքը կատարել է իր խոստումը. «Մի քանի անգամ խոստացել էի այցելել Վրաստան: Ահա վերջապես կարողացա խոստումս կատարել: Թեպետ, գիտեմ, որ դրա համար բավական ժամանակ պահանջվեց: Ուրախ եմ Վրաստանը տեսնելով ժողովրդավարության բարեկաման և տնտեսական առաջընթացի ճանապարհին: «Կարծում եմ, որ դուք մեծ առաջընթաց եք ունեցել վերջին տասը տարիների ընթացքում»,- հայտարարեց Գերմանիայի կանցլերը:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԸՆԳԻՏՄԱՅԻ ԿՈՒՍԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿՎՅԱՆՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՏ

Այցի հաջորդ օրը, օգոստոսի 23-ին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը փակ դռների ձեռքափով հանդիպում ունեցավ Վրաստանում ընդդիմադիր «Միասնական ազգային շարժման», «Եվրոպական Վրաստան» կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Ինչպես հանդիպումից հետո հայտարարեցին դրա մասնակիցները, իրենք

Գերմանիայի կանցլերին մանրամասն տեղեկություն են հաղորդել երկրում ստեղծված իրավիճակի, առաջիկա նախագահական ընտրությունների նախընտրական քաղաքականի և այլ իրատապ հարցերի շուրջ:

ՀԱՐԱՆԵՐԻ ՏՈՒՔԸ՝ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՎԱՍՏԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԻՆ



Վրաստան կատարած պաշտոնական այցի առաջին օրը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, պատվիրակության մյուս անդամների հետ, այցելեց Թբիլիսիում Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշակոթող և հարգանքի տուրք մատուցեց զոհված հերոսներին: Նա իր և Գերմանիայի անունից ծաղկեպսակ դրեց հուշակոթողին:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՈՆԱՍՎԹԱՍ ԳՈՏԻ

Օգոստոսի 24-ին Անգելա Մերկելը այցելեց բռնազավթված գոտի և տեղում ծանոթացավ առկա իրավիճակին:

Այդտեղ Անգելա Մերկելը հանդիպում ունեցավ եվրամիության դիտորդական առաքելության ներկայացուցիչների հետ և նրանցից տեղեկացավ առկա իրավիճակի շուրջ: Հեռադիտակով դիտելով փշալարերից այն կողմ ընկած տարածքը, Անգելա Մերկելը կրկին խոսեց Ռուսաստանի կողմից «օկուպացված» տարածքների մասին:

Դրանից հետո, Գերմանիայի կանցլերը ուղեւորվեց Թբիլիսիի միջազգային օդանավակայան, որտեղ, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հետ միասին, հանդիպում ունեցավ «Արժանի գործընկեր» գորավարության մասնակից գերմանացի զինծառայողներին:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

Օգոստոսի 24-ին, պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը այցելեց Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարան: Բուհում նրան դիմավորեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Համալսարանում Գերմանիայի կանցլերը հանդիպում ունեցավ ուսանողների, պրոֆեսոր-դասախոսական կազմի հետ, պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին. «Ցանկանում եմ բացեիքաց ասել, ուրախ եմ և աջակցում եմ Վրաստանի եվրոպական ձգտումներին, արդյունքում գոյություն ունեն Ասոցիացման և Ազատ առևտրի պայմանագրեր, սակայն եվրոպական կողմից շատ հապճեպ խոստումներ չեն կարող տալ»,- հայտարարեց Անգելա Մերկելը և հավելեց, «Այսօր դուք գիտեք, որ եվրամիության անդամակցության գործընթացում հեռանկարում ունենք Արևմտյան Բալկանների երկրներին, իսկ հաջորդ օրերին եմ լինելու Վրաստանը և Ուկրաինան»,- հայտարարեց Մերկելը:

Պատասխանելով ուսանողներից մեկի՝ Վրաստանի բռնազավթված տարածքների մասին հարցին, Անգելա Մերկելը օգտանգործեց «օկուպացիա» բառը, դրանով բնութագրելով Ռուսաստանի գործողությունների այդ երկրամասերում:

«Ցանկանում եմ ընդգծել, շատ կարևոր է, որ Վրաստանը լավ հարաբերություններ ունենա Ռուսաստանի հետ, քանի որ նա եվրամիության հարեանն է»,- ասաց Գերմանիայի կանցլերը:

Ընդ որում, նա նշեց, որ «Ռուսաստանի հետ շատ դժվար է հարաբերությունները կարգավորել»:

ՄԵՆՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻԻՑ

Օգոստոսի 24-ին, ավարտելով իր պաշտոնական այցը Վրաստանում, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը պատվիրակության անդամների հետ Թբիլիսիի օդանավակայանից ուղեւորվեց Երեւան:

Հյուրին ճանապարհեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջավախիանին և Գերմանիայում Վրաստանի դեսպան Էլզուբա Խոկրիշվիլին, պաշտոնական այլ անձինք: